Ծուշանիկ Կուրղինյան

Խավարի գրկում ծնված իմ հոգին . . .

Խավարի գրկում ծնված իմ հոգին,
Կյանքս խաղալիք բախտի հաճույքին,
Անզուսպ փափագը կատաղի կռվի՝
Չէ՛ . . . չէ խեղդել հավատս հաղթողի . . .

Ինձ երկինք երբե՞ք ուզեց փայփայել,
Ճակատագիրն իրձերս է ավերել,
Բայց պիտի կռվե՞մ, կռվեմ կատաղի,
Ու կռվում թափում ես թույնը սրտիս:

Արի՛ք, որտե՞ղ եք, խավարի որդիք,
Ես, որ ձերն էի ու ձեզնով սնված՝
Կռվի՛ եմ կանչում . . . օ՛, առաջ արիք՝
Ձեզ է պատկանում առաջին հարված . . .

Արի՛ք, որ կռվեմ, վրեժն առնեմ
Իմ ջահել կյանքի՝ ձեզնից հոշոտված . . .
Արի՛ք, որ ձեր արյունը խմեմ՝
Ինչպես որ սրտիս արյունն եք ծծած . . .

1896